

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

2017 թ. ապրիլի 11-ի նիստում

Գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Մինասյան

*Հիմք՝ ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի
26.05.2012թ. նիստում հաստատված
«ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի ֆակուլտետի» կանոնադրություն*

Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն կանոնադրությունը սահմանում է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՇՊՀ) ֆակուլտետի (այսուհետ՝ ֆակուլտետ) գործունեության իրավական հիմքերը:
- 1.2. Յուրաքանչյուր ֆակուլտետ սույն օրինակելի կանոնադրության հիման վրա մշակում և ֆակուլտետի խորհրդում ընդունում է իր կանոնադրությունը, որը հաստատվում է ՇՊՀ գիտական խորհրդում:
- 1.3. Սույն կանոնադրությունը հաստատվում է ՇՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:
- 1.4. Ֆակուլտետի կանոնադրության և ֆակուլտետի օրինակելի կանոնադրության դրույթների միջև հակասություն առաջանալու դեպքում գործում են օրինակելի կանոնադրության դրույթները:
- 1.5. Ֆակուլտետը ստեղծվում, վերակազմակերպվում կամ լուծարվում է ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:
- 1.6. Ֆակուլտետը կառուցվածքային ստորաբաժանում է, որի կարգավիճակը և իրավասությունը սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՇՊՀ կանոնադրությամբ, իր կանոնադրությամբ և ՇՊՀ ներքին իրավական այլ ակտերով:
- 1.7. Ֆակուլտետի պաշտոնական անվանումն է՝
հայերեն՝ _____

ռուսերեն՝ _____
անգլերեն՝ _____

- 1.8. Ֆակուլտետի գտնվելու վայրն է՝ _____
- 1.9. Ֆակուլտետն ունի իր անվանմամբ դրոշմակնիք, սահմանված կարգով կարող է ունենալ նաև պաշտոնաթուղթ (բլանկ) և խորհրդանիշ:

2. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1. Ֆակուլտետը ՇՊՀ գիտակրթական գործունեություն ծավալող հիմնական կառուցվածքային ստորաբաժանում է, որը համակարգում է բարձրագույն կրթության մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը:
- 2.2. Ֆակուլտետն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունել դրոշումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ՇՊՀ կանոնադրությանը, ֆակուլտետի կանոնադրությանը և ՇՊՀ ներքին իրավական այլ ակտերի:
- 2.3. Ֆակուլտետը, ելնելով իրականացվող ուսումնական, մանկավարժական, մեթոդական, գիտական, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական աշխատանքներից, կազմում է իր հաստիքացուցակի նախագիծը և ներկայացնում ՇՊՀ ռեկտորին՝ ըստ սահմանված չափանիշների:

3. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

- 3.1. Ֆակուլտետի կառավարումն իրականացվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ՇՊՀ և ֆակուլտետի կանոնադրությունների միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների գույակցմամբ:
- 3.2. Ֆակուլտետի կառավարման մարմիններն են ֆակուլտետի խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) և դեկանը: Առնվազն հազար ուսանողական համակազմ ունեցող ֆակուլտետում դեկանը կարող է ունենալ տեղակալ:
- 3.3. Ֆակուլտետի կառավարման կոլեգիալ մարմինը խորհուրդն է, որը բաղկացած է *ի պաշտոնե, նշանակովի և ընտրովի* անդամներից:

Ի պաշտոնե և *նշանակովի* անդամների թիվը չի կարող գերազանցել խորհրդի կազմի հիսուն տոկոսը: Խորհրդի անդամների թիվը առաջարկում է ֆակուլտետի դեկանը, որը (խորհրդի անդամների թիվը) ամրագրվում է ֆակուլտետի կանոնադրության մեջ: Խորհրդի կազմում ընդգրկվում են.

- 3.3.1. *ի պաշտոնե*՝ ֆակուլտետի դեկանը (նախագահ), դեկանի տեղակալը (եթե կա), ֆակուլտետի ամբիոնների վարիչները, ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահները.
- 3.3.2. ֆակուլտետի դեկանի *նշանակմամբ*՝ համապատասխան ոլորտ(ներ)ի մասնագետները.

- 3.3.3. **ընտրովի** անդամներ՝ ֆակուլտետի պրոֆեսորները, դոցենտները՝ համամասնության սկզբունքով, նաև՝ սովորողներ (25 %), որոնց առաջադրումն ու ընտրությունն իրականացնում է ֆակուլտետի ուսանողական խորհուրդը:
- 3.4. Խորհրդի լիազորությունների ժամկետը հինգ տարի է, որի ավարտից մեկ ամիս առաջ ղեկանը ռեկտորի հաստատմանն է ներկայացնում խորհրդի անդամների նոր ցուցակը:
- 3.5. Խորհուրդը՝
- 3.5.1. ռեկտորին ներկայացնում է առաջարկություն ֆակուլտետի կառուցվածքում ամբիոններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, լուծարելու, վերակազմավորելու վերաբերյալ.
 - 3.5.2. ընդունում է որոշումներ ֆակուլտետի կրթական, գիտական աշխատանքի, միջազգային կապերի և այլ հարցերի վերաբերյալ.
 - 3.5.3. քննարկում է ֆակուլտետի ամբիոնների ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին ամենամյա հաշվետվությունները և գնահատում ամբիոնների գործունեությունը.
 - 3.5.4. քննարկում է կիսամյակային և տարեկան քննաշրջանների արդյունքները.
 - 3.5.5. քննարկում է կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ընդունված որոշումների դեմ ներկայացված բողոքները.
 - 3.5.6. լսում է ֆակուլտետի ղեկանի ամենամյա հաշվետվությունը և գնահատում նրա գործունեությունը.
 - 3.5.7. սահմանված կարգի համաձայն՝ քննարկում է ղեկանի թափուր պաշտոնի հավակնորդ(ներ)ի համապատասխանությունը առաջադրված պահանջներին.
 - 3.5.8. ֆակուլտետի օրինակելի կանոնադրության հիման վրա ընդունում է ֆակուլտետի կանոնադրությունը և փոփոխություններ ու լրացումներ կատարում դրանում.
 - 3.5.9. առաջադրում է հոգաբարձուների խորհրդում և գիտական խորհրդում ֆակուլտետի ներկայացուցիչների թեկնածուներին.
 - 3.5.10. անհրաժեշտության դեպքում իր կազմից ձևավորում է մշտական և (կամ) ժամանակավոր հանձնաժողովներ.
 - 3.5.11. լուծում է ֆակուլտետի ուսումնական, գիտական աշխատանքների, միջազգային կապերի և այլ գործունեության հարցերը.
 - 3.5.12. ՇՊՀ ռեկտորին է ներկայացնում ֆակուլտետի ուսումնական պլանները ՇՊՀ գիտական խորհրդում հաստատելու համար.
 - 3.5.13. առաջարկություններ է ներկայացնում պատվավոր կոչումներ շնորհելու, մրցանակներ, ուսանողական անվանական կրթաթոշակներ նշանակելու վերաբերյալ: Թեկնածություն է

առաջադրում ՇՊՀ մեղալով պարզևատրելու, հանրապետական ու միջազգային պարզևներ շնորհելու համար:

3.5.14. լուծում է ՇՊՀ կանոնադրությունից, ֆակուլտետի կանոնադրությունից և ՇՊՀ ներքին իրավական այլ ակտերից բխող՝ ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության վերաբերյալ այլ հարցեր:

3.6. Ուսումնական տարվա ընթացքում խորհրդի նիստերը գումարվում են առնվազն ութ անգամ:

3.7. Խորհրդի նախագահը դեկանն է, որը հրավիրում է խորհրդի նիստերը:

Դեկանի ընտրության և հաշվետվության նպատակով հրավիրվող խորհրդի նիստերը վարում է ռեկտորը կամ ՇՊՀ պրոռեկտորներից մեկը՝ ռեկտորի հանձնարարությամբ:

Դեկանի պաշտոնանկության հարցի քննարկման նպատակով հրավիրվող նիստը վարում է ռեկտորը: Դեկանը չի կարող լինել այդ նիստերի նախագահողը:

3.8. Խորհրդի քարտուղարը (այսուհետ՝ քարտուղար) ընտրվում է խորհրդի անդամների կողմից՝ բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

3.9. Դեկանի կողմից խորհրդի նիստը հրավիրելու անհնարինության դեպքում այն հրավիրվում է դեկանի ժամանակավոր պաշտոնակատարի կամ ՇՊՀ ռեկտորի կամ ռեկտորի հանձնարարությամբ՝ ՇՊՀ պրոռեկտորներից մեկի կողմից:

3.10. Քարտուղարի բացակայության դեպքում, խորհրդի որոշմամբ, նրա պարտականությունները կատարում է խորհրդի անդամներից մեկը:

3.11. Խորհրդի նիստի նախագահողը բացում և փակում է նիստը, առաջարկում է նիստի օրակարգը, ապահովում է դրա կատարումը, քվեարկության է դնում օրակարգի հարցերը և անհրաժեշտության դեպքում կազմակերպում է հաշվիչ հանձնաժողովի ընտրությունը:

3.12. Խորհրդի նիստն իրավագոր է խորհրդի անդամների առնվազն երկու երրորդի ներկայության դեպքում: Որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ (բաց քվեարկությամբ, եթե խորհուրդն այլ որոշում չի կայացրել), եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՇՊՀ կամ ֆակուլտետի կանոնադրություններով այլ բան նախատեսված չէ: Ֆակուլտետի խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի աշխատողների և սովորողների համար:

Քվորումի բացակայության դեպքում խորհրդի նիստը հետաձգվում է՝ նույն օրակարգով:

3.13. Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ռեկտորը, պրոռեկտորները, նաև հրավիրյալ մասնակիցներ (եթե կլինեն):

- 3.14. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Խորհրդի նիստի արձանագրությունը (երկու օրինակով) և արձանագրության յուրաքանչյուր հարցի վերաբերյալ կայացված որոշումները (երկու օրինակով) կազմվում են խորհրդի նիստի ավարտից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Արձանագրության մեջ նշվում է նիստի անցկացման օրը, քվեակազմը, օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները և ընդունված որոշումները: Արձանագրությունը ստորագրում են նիստը նախագահողը և քարտուղարը, իսկ որոշումները՝ նիստը նախագահողը: Նիստը նախագահողը և քարտուղարը պատասխանատու են արձանագրությունը և որոշումները ճիշտ կազմելու համար: Խորհրդի նիստերի արձանագրության և որոշումների օրինակներից մեկը պահվում է քարտուղարի մոտ, իսկ մյուս օրինակը՝ ՇՊՀ գիտական քարտուղարի մոտ: Արձանագրությունը և ընդունված որոշումները հինգ աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են հրապարակման ՇՊՀ կայքէջում:
- 3.15. Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է ղեկանը՝ իր իրավասության սահմաններում և ֆակուլտետի կանոնադրության համաձայն: Ֆակուլտետի ղեկանի գործունեությունը համարվում է վարչական և գիտամանկավարժական աշխատանք:
- 3.16. Ֆակուլտետի ղեկանի պաշտոնը ընտրովի է:
- 3.17. Ֆակուլտետի ղեկան կարող է ընտրվել այն դոցենտը կամ պրոֆեսորը, որն ունի գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան և վերջին տաս տարվա աշխատանքային գործունեության ընթացքում առնվազն հինգ տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ:
- Դեկանն իր պաշտոնը կարող է զբաղեցնել ոչ ավելի, քան երկու ժամկետ անընդմեջ:
- 3.18. Ֆակուլտետի ղեկանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում ռեկտորը նշանակում է ղեկանի նոր ընտրություններ:
- 3.19. Ֆակուլտետի ղեկանի տեղակալի (եթե կա) պաշտոնը նշանակովի է: Ֆակուլտետի ղեկանի տեղակալ կարող է նշանակվել տվյալ ֆակուլտետի ամբիոններից այն անձը, ով ունի գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան և դոցենտի կամ պրոֆեսորի գիտական կոչում:
- 3.20. Դեկանի ընտրությունը կազմակերպվում և իրականացվում է ՇՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված՝ ՇՊՀ ղեկանի ընտրության կանոնակարգի համաձայն:
- 3.21. Ֆակուլտետի ղեկանը՝
- 3.21.1. ղեկավարում է կրթական, գիտական, արտադրական, միջազգային և այլ ուղղություններով ֆակուլտետի գործունեությունը.
 - 3.21.2. ապահովում է ՇՊՀ մարմինների և ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումների կատարումը.
 - 3.21.3. ռեկտորի հաստատմանն է ներկայացնում ղեկանի տեղակալի (եթե կա) և ֆակուլտետի խորհրդի քարտուղարի թեկնածությունները.

- 3.21.4. սահմանված կարգով ռեկտորին է ներկայացնում ուսանողներին հեռացնելու, վերականգնելու, կուրսից կուրս փոխադրելու վերաբերյալ առաջարկություններ:
- 3.21.5. իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն և ֆակուլտետի կանոնադրություններով նախատեսված այլ լիազորություններ:
- 3.22. Խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ֆակուլտետին առնչվող ընթացիկ հարցերը քննարկվում և լուծվում են դեկանատի խորհրդի նիստում, որին մասնակցում են դեկանը, դեկանի տեղակալը (եթե կա), ֆակուլտետի կազմի մեջ մտնող ամբիոնների վարիչները, խորհրդի քարտուղարը, ուսանողական խորհրդի և ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահները:
- Դեկանատի նիստերն արձանագրվում են:
- 3.23. Դեկանատի խորհրդի նիստում հարցերը քննարկվում են դեկանի առաջարկով:
- 3.24. Ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական հարցերի քննարկման համար ֆակուլտետում գործում է մեթոդական խորհուրդ, որի ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգով:

4. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- 4.1. Ֆակուլտետը կազմված է ամբիոններից, լաբորատորիաներից և ուսումնական, գիտական ու օժանդակ այլ ստորաբաժանումներից:
- 4.2. Ամբիոնները (բաժինները, լաբորատորիաները) ֆակուլտետի կրթագիտական գործընթացի կազմակերպման կառուցվածքային հիմնական ստորաբաժանումներն են, որոնք գործում են ՇՊՀ, ֆակուլտետի և ամբիոնի ու լաբորատորիայի կանոնադրությունների հիման վրա:
- 4.3. ՇՊՀ ամբիոնը կարող է լինել նաև առանձնակի կարգավիճակով («Ռազմական ամբիոնը»), որի գործունեության համակարգումը կատարվում է ռեկտորի կամ ռեկտորի հրամանով՝ պրոռեկտորներից մեկի կողմից:
- 4.4. Ամբիոնի գիտամանկավարժական կազմում ընդգրկվում են պրոֆեսորները, դոցենտները, ասիստենտները և դասախոսները:
- 4.5. ՇՊՀ ամբիոնում պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումը, նրանց և ՇՊՀ-ի միջև աշխատանքային հարաբերությունների հաստատումը իրականացվում է պայմանագրային հիմունքներով, մրցութային կարգով:
- 4.6. Ամբիոնը, ելնելով կատարվող մանկավարժական, գիտական, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական աշխատանքների ծավալից ու ձևերից, ըստ սահմանված չափանիշների, որոշում է իր աշխատողների ուսումնագիտական բեռնվածությունը:

- 4.7. Ամբիոնը ղեկավարում է վարիչը, որն ընտրվում է բաց մրցույթի հիման վրա, ՇՊՀ գիտական խորհրդի փակ, գաղտնի քվեարկությամբ, մինչև հինգ տարի ժամկետով: Ընտրությունների արդյունքների հիման վրա ռեկտորը տալիս է ամբիոնի վարիչի նշանակման հրաման: Ամբիոնի վարիչի ընտրությունը կազմակերպվում և իրականացվում է ՇՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված՝ ամբիոնի վարիչի ընտրության կանոնակարգի համաձայն:
- Ամբիոնի վարիչի գործունեությունը համարվում է գիտամանկավարժական աշխատանք:
- Ամբիոնի վարիչն իր պաշտոնը կարող է զբաղեցնել ոչ ավելի, քան երկու ժամկետ անընդմեջ:
- 4.8. Ամբիոնի ուսումնագիտական գործունեությանը վերաբերող հիմնական հարցերը քննարկվում են ամբիոնի գիտամանկավարժական կազմի նիստում: Ամբիոնի ուսումնասօժանդակ համակազմի աշխատողներն ամբիոնի նիստին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:
- 4.9. Ամբիոնի վարիչը պատասխանատու է ամբիոնի գործունեության համար: Ըստ սահմանված կարգի՝ ամբիոնի վարիչը խորհրդում ներկայացնում է ամենամյա հաշվետվություն:
- 4.10. Խորհրդում ամբիոնի վարիչի գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում հրավիրվում է խորհրդի արտահերթ նիստ, որի քննարկմանն է դրվում ամբիոնի վարիչի աշխատանքային անհամապատասխանության և ՇՊՀ գիտական խորհրդին՝ ամբիոնի վարիչի պաշտոնանկության (ՇՊՀ գիտական խորհրդին անդամակցության դեպքում նաև՝ լիազորությունների դադարեցման) ներկայացման հարցը: Ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումը կայացվում է փակ գաղտնի քվեարկությամբ:
- 4.11. ՇՊՀ գիտական խորհրդում ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումը փակ գաղտնի քվեարկությամբ ընդունելու դեպքում ռեկտորը լուծում է ամբիոնի վարիչի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը:
- ՇՊՀ գիտական խորհրդում ամբիոնի վարիչի պաշտոնանկությունը չհաստատելու դեպքում հնգօրյա ժամկետում հրավիրվում է ֆակուլտետի խորհրդի նոր նիստ՝ ռեկտորի ղեկավարմամբ: Ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումը ֆակուլտետի խորհրդի նիստի մասնակիցների ձայների առնվազն երկու երրորդի հաստատվելու դեպքում ռեկտորը երկրորդ անգամ հարցը քննարկում է գիտական խորհրդում, որի կայացրած որոշումը համարվում է վերջնական:
- 4.12. Ֆակուլտետի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները ներկայացվում են ֆակուլտետի օրինակելի կանոնադրության հավելվածի պահանջների համաձայն:

Հավելված 1.
Ֆակուլտետի օրինակելի կանոնադրության

_____ ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումները

Ամբիոններ՝

Կենտրոններ՝

Լաբորատորիաներ՝